

ՀԱՆՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

VII Ա դասարանի նախագծային ուսուցման Ուսուցչուհի՝ Նարինե Ոսկանյան

Կառայի մարզի Գեղաձենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի VII Ա դասարանի աշակերտներին հետ՝

1. Ավագյան Գոռ
2. Անդրեասյան էլեն
3. Անտոնյան Ալեն
4. Բաղալյան Դավիթ
5. Թադևոսյան Ալեքս
6. Խաչատրյան Ավետ
7. Իսախանյան Միլենա
8. Մանուկյան Սուրեն
9. Մանուկյան Մանուկ
10. Վարդանյան Ալեն

Ապրիլի 8-ից մինչև մայիսի 13-ը բնկած ժամանակահատվածում իրականացրել են նախագծային ուսուցում «Պարզագույն մեխանիզմների կիրառությունը» թեմայով: Մեր նպատակն էր՝ հետազոտել պարզ մեխանիզմներ թեման ձևավորել պարզ մեխանիզմների աշխատանքի սկզբունքը բացատրելու և կիրառելու կարողություններ, զարգացնել հմտություններ պատրաստելու այնպիսի պրոդուկտ, որն աշխատում է պարզ մեխանիզմների կիրառմամբ, զարգացնել սովորողների խնայական հետաքրքրությունները, թիմում արդյունավետ աշխատելու և համագործակցելու կարողությունները:

Նախագիծն իրականացնելու համար նախատեսված էր 6 շաբաթ: Աշխատանքը սկսելու համար նախ անհրաժեշտ էր ծանոթանալ պարզագույն մեխանիզմների տեսակների և առօրյա կյանքում վերջիններիս կիրառական նշանակության հետ: Աշխատանքի 3-րդ փուլում, նախապես ձևավորված 10 հոգանոց խումբը ուսուցչի կողմից բաժանվեց ենթախմբերի, յուրաքանչյուր ենթախմբում առանձին պրոդուկտ ստանալու համար:

I-ն ենթախումբ՝

- 1) Անդրեասյան էլեն
- 2) Իսախանյան Միլենա
- 3) Վարդանյան Ալեն

Մանրամասն ուսումնասիրեցին առամանիվների աշխատանքի սկզբունքը, մշակեցին դուրս բերված տեղեկությունները, ստացան առամանիվների կիրառմամբ մեխանիզմ:

II-ն ենթախումբ՝

- 1) Անտոնյան Ալեն
- 2) Բաղալյան Դավիթ
- 3) Թադևոսյան Ալեքս
- 4) Մանուկյան Մանուկ

Մանրամասն ուսումնասիրեցին շարժասանդուղիների աշխատանքի սկզբունքը, մշակեցին դուրս բերված տեղեկությունները, ստացան շարժասանդուղիի մոդել:

III-ն ենթախումբ՝

- 1) Ավագյան Գոռ
- 2) Խաչատրյան Ավետ
- 3) Մանուկյան Սուրեն

Մանրամասն ուսումնասիրեցին հուպանուզու աշխատանքի սկզբունքը, մեակեցին դուրս բերված տեղեկությունները, ստացան և շարժիչով աշխատող հուպանուզու մոդել:



Ինչպես նաև կատարեցին շրջայց ինժեներական քաղաքում, որտեղ ծանոթացանք այնտեղ տեղակայված ընկերությունների աշխատանքներին: Սովորողները եղան նաև արտադրամասում, այնուհետև գիտության և տեխնոլոգիաների թանգարանում: Թանգարանում տեղ էին գտել ցուցանմուշների հավաքածուներ, որոնք հայկական ստեղծարարության, համաշխարհային գիտության և տեխնիկայի բոլոր ասպարեզներում հայերի ներդրման լավագույն ասպացույցն են:

■ **Ինժեներական քաղաք:**

Այցը տպավորիչ էր և մեծ ոգևորություն առաջացրեց սովորողների շրջանում: Աշակերտները նախագծային աշխատանքը ներկայացրեցին սահիկաշարի Նախագիծ միջոցով, որը ավելի տեսանելի դարձրեց կատարված աշխատանքը: Շնորհակալություն

ԳԼԱՅԱՏՈՒՄ

Անակերանները թեմայի ընտրության հարցում ցուցաբերել են նախաձեռնողականություն, թեման ընտրվել է ինՖնուրույն: Դերերի բաժնունն իրականացվել է լիարժեք, հաշվի են առնվել յուրաքանչյուրի հետաքրքրություններն ու կարողությունները: Սովորողը լիարժեք ընկալել է իր դերն ու առաջադրանքը: Խնդիրների ձևակերպումը, հարցերի մշակումը, պլանը առկա են: Փամանակի բաժնունն ու աղբյուրների ուսումնասիրումը, տեղեկատվության հավաքագրումը հիմնականում իրականացված են ոչ էական թերություններով: Սովորողը հիմնականում աշխատում է ինՖնուրույն: Սովորողները դրևորում են համագործակցության բարձր մակարդակ՝ խմբում հաջողության հասնելու համար:

Աշխատանքը մշակված և ձևավորված է պատշաճ մակարդակով՝ ոչ էական թերություններով:

Բովանդակությունը ամբողջովին համապատասխանում է թեմային: Աշխատանքը գիտականորեն հիմնավորված է:

Աշխատանքի ներկայացման ձևը/միջոցն ամբողջովին արտացոլում է թեմայի բովանդակությունը:

Խոսքը զրազեա է, պահպանված են տրամաբանական կապերը, ամբողջովին հասկանալի են ձևակերպումներն ու հիմնավորումները:

Առկա է լիարժեք թիմային աշխատանք :

«Պարզագույն մեխանիզմների կիրառությունը» ուսումնական նախագիծը 10 միավորանոց սանդղակով գնահատվում է 9 :